ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2022 թվականի N 513-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄԵՂՎԱՓԵԹԱԿՆԵՐՈՎ ԵՎ ՄԵՂՎԱԲՈՒՅԾԻ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին փոխարինողի 20.10.2022 թվականի զեկուցագիրը և Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի բնակիչների՝ ՀՀ Սյունիքի մարզպետին ուղղված դիմումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի՝ ՀՀ Սյունիքի մարզպետին դիմած բնակիչներին մեղվափեթակների և մեղվաբույծի պարագաներով ապահովելու նպատակով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 8 790 560 (ութ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը՝ 8360000 (ութ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ Հայկ Արզումանյանին մեղվափեթակները, իսկ 430560 (չորս հարյուր երեսուն հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ Վահագն Սարգսյանին՝ մեղվաբույծի պարագաները տրամադրելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հակոբյանին՝ մեղվափեթակները և մեղվաբույծի պարագաները հավելվածում նշված

քաղաքացիներին հանձնելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

21.12.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 21
ք. Կապան